



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 12 » սեպտեմբերի 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 430-Ա

«ՊԵԳԱՍՈՒՄ ԷՅՐԼԱՅՆԶ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 2 հավելվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 10-ի N 3-Ա և 2022 թվականի հունվարի 20-ի N 19-Ա հրամանները և «Պեգասուս Էյրլայնզ» ավիաընկերության 2023 թվականի օգոստոսի 25-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Պեգասուս Էյրլայնզ» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով՝ 2023 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 9 (ինը) չվերթ հաճախականությամբ Հայաստանի

Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 10-ի N 3-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023-2024 թվականի ծմեռային նավիգացիոն ժամանակահատվածում, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 20-ի N 19-Ա հրամանի 1-ին կետով նախատեսված արտոնությունը:

3. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Կոմիտեի կայքում:

4. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

 Recoverable Signature

X 

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ

Signed by: PAYASLYAN STEPAN 1109810601

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ


Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 790/120923
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՄ
ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 790/120923
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE
REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Պեգասուս Էյրլայնզ» “Pegasus Airlines”
Պատվիրատուն Charterer	«Պեգասուս Էյրլայնզ» “Pegasus Airlines”
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320, A321, B737
Հաճախականությունը Frequency	շաբաթական 9 չվերթ 9 flights per week
Երթուղին Air route	Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ Istanbul/LTFJ/-Yerevan/UDYZ/-Istanbul/LTFJ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	29/10/2023 մինչև 30/03/2024 29/10/2023 till 30/03/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ
ACTING CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
STEPAN PAYASLYAN

 Recoverable Signature

X 

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ

Signed by: PAYASLYAN STEPAN 1109810601



12.09.2023

(տալու ամսաթիվը)
(date of issue)